ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2013 թվականի N 11-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2013Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ.մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզում 2013թ ընթացքում հնարավոր գարնանային վարարումների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանն օպերատիվ արձագանքելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Լ.Սարգսյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ
Վ.Հովսեփյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՄՓՎ պետ փ/ծ փոխգնդապետ

Հանձնաժողովի անդամներ՝

Մ.Մխիթարյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Ռ.Ներսեսյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Վ.Սարգսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Ռ.Մելիքջանյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Կ.Դովլաթբեկյան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ա.Փաշինյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ա.Սարգսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Ա.Նազարյան - մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
Մ.Ղալումյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Ա.Մարդանյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Երկանյան - <<Դեբեդ – Աղստև >>, <<Ջրառ>> մասնաճյուղի տնօրեն
Է.Միրզոյան - հիդրոօդերևութաբանական մարզային կայանի պետ

Բ.Սարգսյան - Իջևան ՃՇՇ ՓԲԸ-ի տնօրեն
Ֆ.Անտոնյան - <<Լևոն-2>> ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Ադամյան - <<Տավուշի>> ՃՇՇ ՓԲԸ-ի տնօրեն
Գ.Մանթաշյան - <<Հաղարծին>> ՍՊԸ-ի տնօրեն

2.Մարզի համայնքների ղեկավարներին՝
1/համապատասխան իրավական ակտերով տեղերում ստեղծել նմանատիպ հանձնաժողովներ
2/աջակցել կանխարգելիչ միջոցառումների իրականացման աշխատանքներին
3/անհրաժեշտության դեպքում տարահանվող բնակչությանն ապահովել կենսապահովման միջոցներով

3.Հանձնարարել մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները սպասարկող Իջևան ՃՇՇ ՓԲԸ, <<Լևոն-2>> ՍՊԸ, <<Տավուշի>> ՃՇՇ ՓԲԸ, <<Հաղարծին>> ՓԲԸ-ի տնօրեններին՝
1/կանխարգելիչ միջոցառումների իրականացման ժամանակ ապահովել անհրաժեշտ մեքենասարքավորումներով

4.Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Ռ.Ներսեսյանին՝ կանխարգելիչ, հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսել անհրաժեշտ վառելիքաքսուքային նյութերի պաշար /բենզին՝ 1 տ, դիզ.վառելիք՝ 1 տ/:

5.Մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փ/գ-տ Վ.Հովսեփյանին՝ սահմանել մշտական հսկողություն հեղեղավտանգ տարածքների նկատմամբ:

6.Հանձնաժողովին՝ պարբերաբար ՀՀ Տավուշի մարզպետին ներկայացնել գարնանային հեղեղումների ժամանակ իրականացված աշխատանքների և պատճառված վնասների մասին տեղեկատվություն:

7.Սույն որոշման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. փետրվարի 5
ք. Իջևան